

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2014 թ.

N 521-Ն

ք. Ստեփանակերտ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**.

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 8-ի «Օգտակար հանաժոնների արդյունահանման նպատակով ընդերքից օգտվելու կարգի մասին» N 192 որոշումը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 8-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ստորերկրյա ջրերի հանքավայրերի և ջրատար հորիզոնների շահագործման, պետական հաշվառման, պահպանման և հատուկ ջրօգտագործման թույլտվություն տալու կարգի մասին» N 193 որոշումը.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի «Օգտակար հանաժոնների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների ստեղծման նպատակով ընդերքօգտագործման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 334 որոշումը.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի «Կայունացման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N336 որոշումը.

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի «Կոնցեսիոն պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 337 որոշումը.

6) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի «Կոնցեսիոն վճարի չափը և վճարման կարգը սահմանելու մասին» N 338 որոշումը.

7) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի «Բոնուսի մեծության հաշվարկման մեխանիզմը և կարգը սահմանելու մասին» N 339 որոշումը.

8) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 3-ի «Ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» N 38 որոշումը.

9) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 3-ի «Օգտակար հանածոների հանքավայրերի (բացառությամբ ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի) շահագործման համար լեռնահատկացման կարգը հաստատելու մասին» N 39 որոշումը.

10) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ընդհանուր տարածում և ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոների ցանկերն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների հատուկ ցանկը հաստատելու մասին» N 207 որոշումը.

11) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի «Ընդերքօգտագործման իրավունքի գրավի դեպքում լիազորված մարմնի նախնական համաձայնություն տալու կարգը հաստատելու մասին» N 220 որոշումը.

12) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 11-ի «Ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոներ պարունակող ընդերքի տեղամասերի նկատմամբ հանքային իրավունքի ձևավորման միջգերատեսչական մրցույթային հանձնաժողովի կազմն ու գործունեության կարգը հաստատելու մասին» N 383-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության կառավարության  
2014 թվականի օգոստոսի  
N որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**